Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Գերաշնորհ հայրեր.

Հոգու բերկրությամբ ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Նշանավոր օր է այսօր բոլորիս համար: Առաջին անգամ Եպիսկոպոսաց ժողով է գումարվում Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսաց դասի մասնակցությամբ, որը, հավատում ենք, պիտի դառնա նոր հանգրվան մեր Եկեղեցու առաքելության արդյունավորման ճանապարհին:

Գոհություն եւ փառք ենք մատուցում Տիրոջը, որ Եպիսկոպոսաց այս ժողովի գումարումով շնորհեց պարգեւում Մեզ եղբայրական ոգով Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի եւ մեր Եկեղեցու եպիսկոպոսաց ողջ դասի հետ քայլելու դեպի եկեղեցական մեր կյանքի զորացման ու պայծառացման հորիզոններ: Ուրախ ենք, որ Եպիսկոպոսաց ժողովն իր ներկայությամբ պատվում է Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ Տիար Սերժ Սարգսյանը՝ կրկին հավաստելով Հայ Եկեղեցու առաքելությանը սատարելու, մեր Եկեղեցու եւ հայրենի պետության հարաբերությունները արդյունավորելու գործում իր պատրաստակամությունը: Ողջունում ենք նաեւ մասնակցությունը ժողովին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի:

Սիրելի հոգեւոր հայրեր, այսօր մենք մեկտեղվել ենք հոգեւոր-եկեղեցական մեր կյանքի առավել բարեկարգության տեսլականով, որի մարմնավորման համար կարեւոր առաքելություն ունի Եպիսկոպոսաց ժողովը՝ ի մասնավորի ծիսական, կանոնական եւ դավանաբանական հարցերի ուսումնասիրման եւ սահմանումների բանաձեւման գործում: Եպիսկոպոսը Աստծո տնտեսն է, ասում է սուրբ Պողոս առաքյալը (Տիտ. Ա. 7), եւ «խնամ տանի Եկեղեցւոյ, որ է քաղաք Աստուծոյ», հավելում է սուրբ Գրիգոր Տաթեւացի մեծ վարդապետը: Այս պատասխանատվությամբ Եպիսկոպոսաց սույն ժողովը պիտի քննարկի եւ որոշումներ կայացնի Մկրտության ծեսի եւ սրբադասման կանոնի եւ այս համատեքստում՝ Հայոց Ցեղասպանության զոհերի սրբադասման օրակարգային հիմնական հարցերի վերաբերյալ: Մկրտության ծեսի միօրինակության ապահովման եւ Սրբադասման կանոնի հաստատման ուղղությամբ հետեւողական աշխատանք են իրականացրել Ամենայն Հայոց Հայրապետության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համատեղ հանձնախմբերը՝ հանգամանալից կերպով ուսումնասիրելով պատմական հիմքերը, ներկա իրավիճակն ու ժամանակի պահանջները, նաեւ՝ հավատացյալ մեր հոտի ակնկալիքները: Մեր բարձր գնահատանքն ենք բերում Կանոնական, Սրբադասման եւ Ծիսական հանձնախմբերի ատենապետերին եւ անդամներին՝ իրենց նախանձախն-

դիր աշխատանքի համար: Ժողովը կարեւորությամբ անդրադարձ է կատարելու նաեւ մեր Սուրբ Եկեղեցուն հուզող այլ խնդիրների ու մարտահրավերների:

Եկեղեցին Քրիստոսի խորհրդական մարմինը եւ հավատացելոց հավաքականությունը լինելով, նաեւ ժամանակների մեջ գործող կառույց է եւ իր առաքելության ճանապարհին զգում է բարեկարգման եւ բարեփոխումների անհրաժեշտությունը: Պատմության մեջ մեր Հայրենիքի փրոհումները, քաղաքական բարդ հանգամանքներում մեր ժողովրդի համար ստեղծված դժվարին կացությունները, աղետները, կոտորածներն ու ցեղասպանությունը, աստվածմերժության խորհրդային տարիները թույլ չեն տվել ըստ անհրաժեշտության զբաղվելու եկեղեցական բարեկարգության հարցերով: Գտնվելով տարբեր պետությունների կազմում՝ մեր Եկեղեցու Նվիրապետական աթոռները գործել են հաճախ տարբեր, երբեմն՝ պարտադրված կանոնակարգերով: Օսմանյան կայսրության տիրապետության ներքո Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Կոստանդնուպոլսի եւ Երուսաղեմի Հայոց պատրիարքությունները առաջնորդվել են Ազգային Սահմանադրության դրույթներով, իսկ Ռուսական կայսրության իշխանության ներքո Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Պոլոժենիայով: Մեր Եկեղեցու կյանքը եւ վարչական գործունեությունը ներազդվել են այս պայմաններից՝ տեղի տալով հաճախ տարակարծությունների ու շփոթմունքների: Աննպաստ այսպիսի իրավիճակներում բարեկարգման ծրագրերը, որոնք մեր Եկեղեցու կյանքում օրակարգային են ավելի քան մեկ դար, հետաձգվել են կամ միայն մասամբ կարգավորվել: Խորհրդային իշխանության տարիներին Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջեւ ստեղծված լարված հարաբերությունները, որ հանգեցրին պառակտման եւ վարչական բաժանումի, նույնպես պատճառ հանդիսացան բարեփոխումների գործընթացի հապաղման: Այսօր անկախ է մեր Հայրենիքը, եւ Եկեղեցին ազատ գործելու եւ բարեփոխումներ իրականացնելու մեծ հնարավորություններ ունի՝ հաղթահարելու համար մեր առջեւ ծառացած համաեկեղեցական հիմնախնդիրները:

Գոհություն Աստծո, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին այսօր ի սփյուռս աշխարհի հոգեւոր վերազարթոնք է ապրում: Մեր ժողովրդի հոգեւոր-եկեղեցական կյանքը վերընձյուղվում է, խմորվում Ավետարանի լույսով՝ ամրորեն խարսխվելով հայրերի հավատքի, սրբազան ավանդության, կրոնական իմացության ու գիտելիքի վրա: Ձեռքբերումներ ունենք հոգեւորականների ուսյալ նոր սերնդի պատրաստման, եկեղեցաշինության, Ավետարանի քարոզության զորացման, քրիստոնեական կրթության ու դաստիարակության առաքելության մեջ: Այս հաջողություններով հանդերձ մեր առջեւ հառնած են ներեկեղեցական չլուծված բազում հարցեր, ինչպես նաեւ՝ խնդիրներ, որոնք հետեւանք են եկեղեցական իրավունքի, մեր Եկեղեցու կանոնական սկզբունքների վրա հիմնված օրենքների ու կանոնադրությունների բացակայության, ինչը շատ անգամ տեղիք է տալիս թյուրըմբռնումների ու կամայականության դրսեւորումների՝ դժվարացնելով ու բարդացնելով ցանկալի առաջընթացը եկեղեցական մեր կյանքի: Մեր Սուրբ Եկեղեցու գործունեությունն ու կյանքը կանոնակարգելու համար անհրաժեշտ պայման է կանոնավորապես գործող դարձնել համաեկեղեցական-ժողովական մարմինները եւ ստեղծել սահմանադ-

ռություն՝ եկեղեցական կառույցների, Նվիրապետական Աթոռների իրավասությունները, գործունեությունն ու փոխհարաբերությունները սահմանող:

Մեր Եկեղեցու կյանքը վերելքի պիտի առաջնորդեն նաեւ ծիսա-արարողական ոլորտի բարեփոխումները, հոգեւոր-կրթական եւ քրիստոնեական դաստիարակության ասպարեզներում՝ ուսուցման արդյունավետ միջոցների ու կերպերի կիրառումը, մեր հայրերի գործերի, ինչպես նաեւ՝ արդիական մտածողությամբ մեր Եկեղեցու վարդապետությանը հարազատ աստվածաբանական նոր աշխատությունների հրապարակումը: Ժամանակի հետ մեր Եկեղեցու ընթացքը համաքայլ պահելու եւ մեր ժողովրդին հստակ կողմնորոշում ապահովելու համար հարկ է մշակել եւ հաստատել ընկերային, բարոյական հարցերի, աշխարհաքաղաքական զարգացումների, գիտական նորարարությունների, գլոբալիզացիայի եւ նրանից ծագող երեւույթների վերաբերյալ Հայ Եկեղեցու սոցիալական հայեցակարգը: Տեղեկացնենք, որ այս նպատակով ամիսներ առաջ Մայր Աթոռում հաստատել ենք առանձին գրասենյակ: Եկեղեցին հուզող խնդիրների եւ անհրաժեշտությունների շարքում կուզենք հավելել նաեւ, որ շարունակում են խիստ պահանջ մնալ նոր սերնդի հոգեւորականաց պատրաստությունը, եկեղեցիների կառուցումը, մեր հնագույն վանքերի ու եկեղեցիների նորոգությունը եւ վանական կյանքի կազմակերպումը: Այս ամենի իրագործման համար անհրաժեշտ են ազգիս համատեղ ջանքերը՝ հավատացյալից, հովվից մինչ հովվապետ:

Հոգեփրկչական եւ ազգապահպան իր առաքելությամբ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու դերը իրապես բացառիկ է մեր ժողովրդի կյանքում, որը վկայված է պատմությամբ եւ այսօր արդարորեն ամրագրված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ: Մեր Եկեղեցին ներշաղախ տիրավանդ իր կոչմանը՝ դարերի բովում առկայծ է պահել մեր ժողովրդի հոգում ազատության սերը, հայրենի պետականության տեսիլքը՝ հանդիման բազում վտանգների ու նեղությունների: «Վասն հաւատոյ»-ն եղել է նաեւ «վասն հայրենեաց» ու դարձել խորհուրդը մեր ինքնության եւ հարատեւության: Այս գիտակցությամբ ու ոգով, ինչպես անցյալում, այնպես եւ այսօր, մեր Եկեղեցին ամեն կարելիությամբ մասնակից է հայրենի պետականաշինության նվիրական գործին: Այսօր բարեփոխման ընթացքների հետ Հայրենիքում տակավին առկա են հոգսեր, դժվարություններ: Հայրենաբնակ մեր ժողովուրդը դեռեւս շարունակում է ապրել շրջափակման եւ փխրուն խաղաղության պայմաններում: Դեռ չեն հաղթահարվել աղքատությունն ու գործազրկությունը, մտահոգիչ է արտագաղթը:

Այս հրամայականների առջեւ պարտքի ու պատասխանատվության մեր բաժինն ունենք՝ համախմբելու մեր ժողովրդին ու նեցուկ լինելու մեր պետությանը դժվարին խնդիրների լուծման գործում: Եկեղեցական մեր կառույցների առավել կազմակերպմամբ եւ միասնական աշխատանքով ավելի պիտի զորանա մեր Եկեղեցու գործունեությունը, եւ կարող պիտի լինենք ի Հայրենիս եւ ի Սփյուռս լիովին վեր հանել մեր ժողովրդի ներուժը՝ ի խնդիր մեր երկրի առաջընթացի ու զարգացման, տնտեսական, ընկերային դժվարությունների հաղթահարման եւ Սփյուռքում բարձրացող հրամայականների դիմագրավման: Հայրենիք-Սփյուռք միասնականությամբ հզոր, ամուր, անխոցելի պիտի լինի

Եկեղեցական ժողովի մասնակիցները

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ելույթը

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ելույթը

մեր Հայրենիքը, առավել պաշտպանված, ինքնավստահ եւ կենսունակ՝ հայ Սփյուռքը: Հայրենիք-Սփյուռք միասնականությամբ արգասավոր պիտի լինեն մեր ջանքերը միջազգային ասպարեզում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման եւ Հայոց Ցեղասպանության դատապարտման, որի 100-ամյա տարելիցի ոգեկոչումը պիտի դարձնենք արդարության եւ պահանջատիրության զորեղ կոչ ողջ աշխարհին: Հայրենիք-Սփյուռք միասնականությամբ ի զորու պիտի լինենք դիմակայելու մեր ազգին պատուհասող փորձություններին, դժվարություններին ու նեղություններին, ինչպիսիք այսօր ծառացել են մեր ժողովրդի կյանքում Մերձավոր Արեւելքում, մասնավորապես՝ Սիրիայում: Շարունակվող հակամարտության հետեւանքով սիրիահայությունը այսօր էլ կրում է մեծ նեղություններ ու ծանր կորուստներ: Խաղաղության հայցով առ Տերը, կրկին Մեր հորդորն ենք բերում թեմական առաջնորդներին՝ հավատավոր մեր զավակների հետ ամեն կարելիությամբ աջակցել եւ սատարել սիրիահայ մեր եղբայրներին ու քույրերին՝ քաջալեր պահելու նրանց ոգին՝ դժվարությունները հաղթահարելու համար:

Մեր միասնականության բարի արդյունքներով շեն ու պայծառ պիտի պահենք Սփյուռքի հայ կյանքը, որի խնդիրներին Ձեզանից շատերը քաջատեղյակ են՝ անձնապես կրելով այդ մտահոգությունները: Այսօր հաճախ ենք խոսում հայ դպրոցի տկարացման, հայոց լեզվի իմացության նահանջի, հոգեւոր եւ ազգային կյանքում երիտասարդության ներգրավվածության նվազման մասին, որոնք ահագնացնում են ուծացման ընթացքները: Այսօր, երբ ունենք մեր անկախ պետականության քաջալերող իրականությունը, երբ ցեղասպանությունը վերապրած մեր ժողովրդի զավակները Սփյուռքում այլեւս իբրեւ հարգված ու վստահելի քաղաքացի՝ իրենց արդար վաստակով ստեղծել են հոգեւոր եւ ազգային կառույցներ ու հաստատություններ, պիտի ջանանք ազգային-եկեղեցական մեր կյանքը ավելիով դարձնել հարազատ աշխարհ մեր զավակաց համար: Մեր Եկեղեցին առավել արդյունավետությամբ պիտի ծառայեցնի այդ հնարավորությունները մեր ժողովրդին հավատքով, ազգային գիտակցությամբ, մայրենի լեզվի հանդեպ նախանձախնդրությամբ կենսունակ պահելու գործին: Հոգեւոր արժեքներով ներշաղախ ազգային կյանքի մեջ մեր ժողովուրդը, մասնավորապես՝ երիտասարդությունը, պիտի գտնի իր հարցերի պատասխանները, Աստծուն հավատարիմ իր անսայթաք ուղին, իր երջանկությունը եւ պիտի շարունակի ապրել ազգային ինքնությամբ՝ իր ուժերը, իր տեսիլքները բազմապատկելով մեր ազատ Հայրենիքից առնվող զորությամբ:

Քսանմեկերորդ դարը գիտատեխնիկական առաջընթացի ու նվաճումների հետ բերել է նաեւ բարոյական արժեքների անկում, մարդու իրավունքների ճիշտ ընկալման աղճատում, ազգային ինքնության եւ ընտանեկան արժեքների խաթարում, որոնցից, ցավոք, զերծ չմնաց նաեւ ազգային մեր կյանքը, ինչպես Հայրենիքում, այնպես եւ՝ Սփյուռքում: Դարի հոգեզուրկ ընթացքներին, աշխարհայնացման, համահարթեցման վտանգներին պիտի կարողանանք դիմագրավել մեր ժողովրդի եւ հատկապես՝ երիտասարդության հոգում քաջարթուն պահելով սերը, վստահությունը հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին, նախանձախնդրությունը հանդեպ մեր հայրերի սուրբ հավատքը եւ ազգային ավանդները: Մեր Եկեղեցին, իբրեւ Տիրոջ շնորհաց առատաբուխ աղբյուր, պիտի ոռո-

գի մեր կյանքի անդասպանները, հոգեւոր լույսով նորոգի ու պայծառացնի բարեպաշտ հոգին մեր ժողովրդի եւ հաստատուն պահի արդարության, ճշմարտության, մարդասիրության արժեքների մեջ, որոնցով պիտի բարգավաճեն, բարիով ու բարիքով լցվեն մեր երկիրն ու համայն հայ կյանքը: Մեր առաքելությունը մեկն է՝ հովվել եւ առաջնորդել մեր ժողովրդին դեպի փրկություն, պահպանել Աստծո եւ հայրենյաց սիրո մեջ, որպեսզի ապրենք եւ հարատեւենք իբրեւ Տիրոջ սեփական եւ ընտրյալ ժողովուրդ ու Եկեղեցի:

Սիրելի հոգեւոր հայրեր, ահա եկեղեցական ոլորտում եւ ազգային կյանքում այն խնդիրները եւ գործունեության առաջնահերթությունները, որ ցանկացանք առանձնացնել, եւ որոնց վճռումն ու իրականացումը մեր Եկեղեցին Աստծո օրհնությամբ պիտի առաջնորդեն լիաշունչ եւ արգասավոր առաքելության: Մեր ժողովուրդը մեզ հետ է Հայ Եկեղեցու հանդեպ իր անխախտ նվիրումով, Եկեղեցին զորացնելու ջերմ զգացումով, եւ մեր ջանքերը արձագանք պիտի գտնեն հավատցյալ մեր զավակների հոգում՝ աջակցություն բերելու պատրաստակամությամբ:

Առ Աստված աղոթքով հայցում ենք Սուրբ Հոգու առաջնորդությունը Եպիսկոպոսաց ժողովի աշխատանքներին եւ բերում առաքյալի հորդորը. «Եղբայրներ, ինչ որ ճշմարտությամբ է, ինչ որ՝ արդարությամբ, ինչ որ՝ սրբությամբ, ինչ որ՝ սիրով, ...այն խորհեցեք: ...Եւ խաղաղության Աստվածը թող լինի ձեզ հետ» (Փիլիպ. Դ. 8-9):

Թող Տերը խաղաղություն պարգեւի աշխարհին, պատերազմական դժվարություններ կրող ժողովուրդներին, Իր բարի հայացքի ներքո անխոռով պահի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրն ու աշխարհասփյուռ մեր ժողովրդին, անսասան՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ Նվիրապետական Աթոռներով ու սպասավորներով, պարգեւելով հոգեւոր առաջընթաց ու բարօրություն:

Բարի ընթացք մեր աշխատանքներին: